ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 29.12.2016թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ 125/16

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից, քննելով «Բարվա» ՍՊԸ-ի 19.12.2016թ. ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-125/16 բողոք), ինչպես նաև ուսումնասիրելով ՀՀ Շիրակի մարզի Քեթի, Մարմաշեն, Բյուրական և Վահրամաբերդ գյուղերի գյուղապետարանների գրությունները և կից փաստաթղթերը և ԳԲԽ-125/16 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 27.12.2016թ. ներկայացրած եզրակացությունը, պարզեց հետևյալը.

1. **<u>«Բարվա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>**

«Բարվա» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 19.12.2016թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

ՀՀ Շիրակի մարզի Քեթիի գյուղապետարանն իր կարիքների համար 10.08.2016 թվականին հայտարարել է (ծածկագիր՝ «ՇՄՔՀ-ԲԸԱՀԱՊՁԲ-16/1») «Հակակարկտային կայանի» ձեռքբերման նպատակով (առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգ: Հայտերի բացման օր է սահմանվել 12.08.2016 թվականը:

ՀՀ Շիրակի մարզի Մարմաշենի գյուղապետարանն իր կարիքների համար 10.08.2016 թվականին հայտարարել է (այսուհետ նաև՝ Հրավեր) ծածկագիրը՝ «ՇՄՄԳ-ԲԸԱՀԱՊՁԲ-16/1» «Հակակարկտային կայանի» ձեռքբերման նպատակով (առանց

գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգ: Հայտերի բացման օր է սահմանվել 12.08.2016 թվականը:

ՀՀ Շիրակի մարզի Վահրամաբերդ գյուղի գյուղապետարանի կարիքների համար 29.07.2016 թվականին հայտարավել է (ծածկագիր՝ «ՇՄՀՎ-ԲԸԱՀԱՊՁԲ-16/3») «Հակակարկտային կայանի» ձեռքբերման նպատակով (առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգ: Հայտերի բացման օր է սահմանվել 02.08.2016 թվականը:

ՀՀ Շիրակի մարզի Բյուրակնի գյուղապետարանն իր կարիքների համար 12.08.2016 թվականին հայտարարել է (ծածկագիր՝ «ՇՄԲԳ-ԲԸԱՀԱՊՁԲ-16/1») «Հակակարկտային կայանի» ձեռքբերման նպատակով (առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգ: Հայտերի բացման օր է սահմանվել 16.08.2016 թվականը:

«Բարվա» ՍՊԸ-ն հայտնել է, որ նշված ընթացակարգերը անցկացվել են ապօրինի, մասնավորապես՝ նույն կարգով նախատեսված գնում կատարելու դեպքում ներկայացվող երեք անձանց (հնարավոր մասնակից) պետք է ուղարկվեր տվյալ գնման հրավերը, որը չի կատարվել:

Նշված ծածկագրերով ընթացակարգերի արդյունքում արդեն իսկ կնքվել են պայմանագրեր:

Ընկերությունը գտնում է, որ բողոքը ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ բանակցային ընթացակարգը կարող է կազմակերպվել առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու, եթե ծագել է գնման անհետաձգելի պահանջ և, արտակարգ իրավիճակից ելնելով, գնման այլ ընթացակարգի կիրառումը ժամկետի առումով անհնար է, պայմանով, որ նման պահանջը հնարավոր չէր կանխատեսել:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 23-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերության համաձայն՝ բացառությամբ սույն կարգի 25-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանված գնումների, վառելիքի, քսայուղերի, գյուղատնտեսական նշանակության ապրանքների և ավիասպասարկման ծառայությունների, որոնց դեպքում

պատվիրատուի ղեկավարի կողմից սահմանված ժամկետներում, իսկ մնացած գնումների դեպքում, եթե պատասխանատու ստորաբաժանում սահմանելու ակտով նախատեսված չէ ավելի կարճ ժամկետ, ապա գնումների պլանը հաստատվելու կամ փոփոխվելու օրվան հաջորդող վաթսուն աշխատանքային օրվա ընթացքում պատասխանատու ստորաբաժանումը՝ կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է՝ օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված հիմքերով գնումներ կատարելու դեպքում այն անձի կամ անձանց (հնարավոր մասնակից) տվյալները (անվանումը, գտնվելու վայրը, հնարավորության դեպքում՝ էլեկտրոնային փոստի հասցեն), որոնց պետք է ուղարկվի տվյալ գնման հրավերը: Ընդ որում, սույն կարգի 25-րդ կետի 6-րդ ենթակետի «բ», «գ» և «դ» պարբերություններով նախատեսված հիմքերով գնում կատարելու դեպքում ներկայացվող անձանց (հնարավոր մասնակից) թվաքանակը չի կարող պակաս լինել երեքից:

Ըստ Ընկերության՝ նշված իրավական ակտի համապատասխան կետից երևում է, որ բանակցային ընթացակարգով գնում կատարելու համար ընթացակարգը կարող է կազմակերպվել առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու օրենքով իմպերատիվ սահմանված կարգին, այն է՝ Կարգի 25-րդ կետի 6-րդ ենթակետի «գ» և «դ» պարբերություններով նախատեսված հիմքերով ոչ էլեկտրոնային եղանակով գնում կատարելու դեպքում ներկայացվող անձանց (հնարավոր մասնակից) թիվը չի կարող պակաս լինել երեքից, ընդ որում նշված ընթացակարգ անցկացնելու դեպքում պարտավոր է ծանուցել այդ նույն անձանց ընթացակարգի մասին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն **հնարավոր մասնակիցների** համար,

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում **մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը**»:

Ըստ Ընկերության՝ նշված նորմերից հետևում է, որ գնում կատարելու նպատակով մրցույթ հայտարարելու դեպքում այն պետք է իրականացվի Պատվիրատուի կողմից այնպես, որ պահպանվեն մրցակցային ոչ խտրական հիմունքներով մրցույթի անցկացման պայմանները:

«Բարվա» ՍՊԸ-ն նշել է, որ տվյալ դեպքում նշված ծածկագրերով ընթացակարգերի շրջանակներում չեն պահպանվել վերը նշված պահանջները հնարավոր մասնակիցների համար: Ավելին, Ընկերությունը գտնում է, որ պատվիրատուները ի սկզբանե ընտրելով ոլորտը կարգավորող իրավական ակտերին չհամապատասխանող ընթացակարգ, խախտել են հենց իրենց իսկ ընտրած ընթացակարգերի անցկացման պայմանները և ստեղծել արհեստական խոչընդոտներ թափանցիկ, մրցակցային, հնարավոր մասնակիցների խրախուսման սկզբունքներով գնումների կազմակերպման համար՝ պատճառելով վնաս:

«Բարվա» ՍՊԸ-ն նշել է, որ նույն հիմքով ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը թիվ ԳԲԽ-97/16 գործով 27.09.2016թ. կայացրած որոշմամբ ՀՀ Շիրակի մարզի Գեղանիստ գյուղի կողմից անցկացված «ՇՄԳԳ-ԲԸԱՀԱՊՁԲ-16/1» ծածկագրով ընթացակարգը ճանաչել է ապօրինի:

Ելնելով վերոգրյալից՝ Ընկերությունը բողոքով խնդրել է «ՇՄՔՀ-ԲԸԱՀԱՊՁԲ-16/1», «ՇՄՄԳ-ԲԸԱՀԱՊՁԲ-16/1», «ՇՄՎՀ-ԲԸԱՀԱՊՁԲ-16/3» և «ՇՄԲԳ-ԲԸԱՀԱՊՁԲ-16/1» ծածկագրերով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգերը ճանաչել ապօրինի:

2. ՀՀ Շիրակի մարզի Քեթի, Մարմաշեն, Բյուրակն և Վահրամաբերդ գյուղերի գյուղապետարանների կողմից բողոքների վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը

Մարմաշենի գյուղապետարանը (այսուհետև՝ Պատվիրատու) ամբողջությամբ առարկել է «Բարվա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի դեմ և հայտնել է, որ այն անհիմն է և ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

«Բարվա» ՍՊԸ-ն «ՇՄՔՀ-ԲԸԱՀԱՊՁԲ-16/1» ծածկագրով ընթացակարգն ապօրինի ճանաչելու պահանջով նույն թվականի օգոստոս ամսին ևս բողոք էր ներկայացրել, որը բողոքարկման խորհրդի կողմից մերժվել էր: Ինչպես նաև պետք է նշել, որ ընթացակարգի հաղթող ճանաչված «Լոկատոր» ՓԲ ընկերության կողմից արդեն իսկ տեղադրվել է հակակարկտային կայանը և կազմվել է համապատասխան հանձնման-ընդունման ակտ:

Բողոքաբերը բողոքում նշել է, թե իբր վերը նշված ծածկագրով ընթացակարգը անցկացվել է ապօրինի, քանի որ՝ «սույն կարգով նախատեսված գնում կատարելու դեպքում ներկայացվող երեք անձանց (հնարավոր մասնակից) պետք է ուղարկվեր տվյալ գնման հրավերը, որը չի կատարվել»: Բողոքաբերը նշված պնդման իրավական հիմքը նշել է ՀՀ կառավարության 2011թ. թիվ 168-Ն որոշման 23-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերությունը, համաձայն որի՝ «Բացառությամբ սույն կարգի 25-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանված գնումների, վառելիքի, քսայուղերի, գյուղատնտեսական նշանակության ապրանքների և ավիասպասարկման ծառայությունների, որոնց դեպքում պատվիրատուի ղեկավարի կողմից սահմանված ժամկետներում, իսկ մնացած գնումների դեպքում, եթե պատասխանատու ստորաբաժանում սահմանելու ակտով նախատեսված չէ ավելի կարճ ժամկետ, ապա գնումների պլանը հաստատվելու կամ փոփոխվելու օրվան հաջորդող վաթսուն աշխատանքային օրվա ընթացքում պատասխանատու ստորաբաժանումը կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է բացառությամբ էլեկտրոնային եղանակով իրականացվող՝ առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգով կատարվող գնումների, օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված հիմքերով գնումներ կատարելու դեպքում այն անձի կամ անձանց (հնարավոր մասնակից) տվյալները (անվանումը, գտնվելու վայրը, հնարավորության դեպքում՝ էլեկտրոնային փոստի հասցեն), որոնց պետք է ուղարկվի տվյալ գնման հրավերը: Ընդ որում, նույն կարգի 25-րդ կետի 6-րդ ենթակետի «գ» և «դ» պարբերություններով նախատեսված հիմքերով ոչ էլեկտրոնային եղանակով գնում կատարելու դեպքում ներկայացվող անձանց (հնարավոր մասնակից) թիվը չի կարող պակաս լինել երեքից»:

Պատվիրատուն նշել, որ բողոքաբերի նշած փաստերը անհիմն են, քանի որ բողոքաբերը չգիտի և չի կարող իմանալ, թե Պատվիրատուն հրավերը հնարավոր մասնակիցներին ուղարկել է, թե ոչ: Պատվիրատուի կողմից երեք հնարավոր մասնակիցների էլեկտրոնային փոստով ուղարկվել է հրավեր, սակայն այդ ուղարկված հրավերները անհրաժեշտություն չլինելու պատճառով չեն պահպանվել: Պատվիրատուն նշել է նաև, որ միայն մեկ ընկերություն է մասնակցել ընթացակարգին, որն էլ ճանաչվել է ընթացակարգի հաղթող: Նույն ընթացակարգի վերաբերյալ «Բարվա» ՍՊԸ-ի կողմից մեկ անգամ արդեն իսկ ներկայացվել էր բողոք, որը խորհրդի կողմից մերժվել էր: Հարկ է նշել, որ պայմանագրով նախատեսված մատակարարումը մրցույթի հաղթող ընկերության

կողմից պատշաճ կատարվել է և այդ պատճառով էլ. փոստով ուղարկված հրավերները պահելու անհրաժեշտությունը վերացել է:

Տվյալ դեպքում հարց է առաջանում, թե բողոքարկման խորհուրդը ինչպես պետք է ապօրինի ճանաչի ընթացակարգը, եթե նման իրավազորությամբ օժտված չէ: Բողոքարկման խորհուրդն իրավունք ունի մրցույթի ընթացակարգն ապօրինի ճանաչել մինչև պայմանագրի կատարումը, իսկ պայմանագրի կատարումից հետո բողոքարկման խորհուրդը նման որոշում կայացնելու իրավունք, ըստ էության, կարծում ենք, չունի:

Հաշվի առնելով այն, որ ընթացակարգի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի կողմից պայմանագրային պարտավորությունները կատարվել են, պայմանագրի ժամկետը լրացել է, պայմանագիրը դադարել է գործել, Պատվիրատուի կողմից բոլոր փաստաթղթերն արխիվացվել են, տվյալ դեպքում, բողոքարկման խորհուրդն ինչ հիմքով պետք է հնարավոր մասնակիցներին հրավեր ուղարկելու փաստի ապացուցման բեռը դնի Պատվիրատուի վրա, այն էլ այն դեպքում, երբ «Գնումների մասին» ՀՀ օրենքի, ինչպես նաև ՀՀ գնումները կարգավորող օրենսդրության համաձայն այն ապացուցելու պարտականությունը դրված չէ Պատվիրատուի վրա, այլ կարծում ենք, որ այն պետք է ապացուցվի այն անձի կողմից, ով վիճարկում է այդ փաստը:

Ուստի, հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով ՀՀ գնումները կարգավորող օրենսդրության պահանջները և սկզբունքները, Պատվիրատուն խնդրել է «Բարվա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ Շիրակի մարզի Քեթի, Բյուրակն և Վահրամաբերդ գյուղի գյուղապետարանների կողմից 26.12.2016թ. և 27.12.2016թ. ներկայացվել են նույնաբովանդակ դիրքորոշումներ բողոքների վերաբերյալ:

Պատվիրատուները, պաշտաճ ծանուցված լինելով ԳԲԽ-125/16 բողոքը քննող հանձնաժողովի 22.12.2016թ. ժամը 17:00-ի նիստի վերաբերյալ, չեն ապահովել իրենց ներկայացուցիչների մասնակցությունը:

3. ԳԲԽ-125/16 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը Խորհրդին է ներկայացրել իր 27.12.2016թ. եզրակացությունը և առաջարկել է «Բարվա» ՍՊԸ-ի 19.12.2016թ. ներկայացված բողոքը մերժել:

4. ԳԲԽ-125/16 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-125/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1.ՀՀ Շիրակի մարզի Մարմաշենի գյուղապետարանի կողմից ՀՀ Շիրակի մարզի Քեթիի գյուղապետարանի կողմից կարիքների համար հակակարկտային կայանի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՇՄՄԳ-ԲԸԱՀԱՊՁԲ-16/1» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգ:

2. ՀՀ Շիրակի մարզի Քեթիի գյուղապետարանի կողմից ՀՀ Շիրակի մարզի Քեթիի գյուղապետարանի կարիքների համար հակակարկտային կայանի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՇՄՔՀ-ԲԸԱՀԱՊՁԲ-16/1» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգ:

3. ՀՀ Շիրակի մարզի Բյուրակնի գյուղապետարանի կողմից ՀՀ Շիրակի մարզի Բյուրակնի գյուղապետարանի կարիքների համար հակակարկտային կայանի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՇՄԲԳ-ԲԸԱՀԱՊՁԲ-16/1» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգ:

4. ՀՀ Շիրակի մարզի Վահրամաբերդի գյուղապետարանի կողմից ՀՀ Շիրակի մարզի Վահրամաբերդի գյուղապետարարանի կարիքների համար հակակարկտային կայանի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՇՄՎՀ-ԲԸԱՀԱՊՁԲ-16/3» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգ:

5. Վերը նշված ընթացակարգերին հայտ է ներկայացրել միայն մեկ մասնակից՝ «Լոկատոր» ՓԲԸ-ն:

6. «ՇՄՄԳ-ԲԸԱՀԱՊՁԲ-16/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.08.2016թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 8-րդ կետի 5-րդ ենթակետով, «ՇՄՔՀ-ԲԸԱՀԱՊՁԲ-16/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.08.2016թ. ժամը 15:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 8-րդ կետի 5-րդ ենթակետով, «ՇՄԲԳ-ԲԸԱՀԱՊՁԲ-16/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.08.2016թ. ժամը 15:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 8-րդ կետի 5-րդ ենթակետով, «ՇՄՎՀ-ԲԸԱՀԱՊՁԲ-16/3» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.08.2016թ. ժամը 15:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 8-րդ կետի 6-րդ ենթակետով որոշվել է նշված ծածկագրերով ընթացակարգերի ընտրված մասնակից ճանաչել «Լոկատոր» ՓԲԸ-ին՝ որպես բավարար գնահատված հայտ և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից նախապատվություն տալու սկզբունքով, և ծանուցել «Լոկատոր» ՓԲԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում պայմանագիր կնքելու մասին և www.gnumner.am համացանցային կայքում հրապարակելու պայմանագրեր կնքելու մասին որոշման մասին:

7. «Բարվա» ՍՊԸ-ն 11.08.2016թ., 12.08.2016թ. և 16.08.2016թ. ներկայացրել է բողոքներ ՀՀ Շիրակի մարզի Քեթի, Մարմաշեն, Բյուրակն և Վահրամաբերդ գյուղապետարանների կողմից կազմակերպված համապատասխանաբար «ՇՄՔՀ-ԲԸԱՀԱՊՁԲ-16/1», «ՇՄՄԳ-ԲԸԱՀԱՊՁԲ-16/1», «ՇՄԲԳ-ԲԸԱՀԱՊՁԲ-16/1» և «ՇՄՎՀ-ԲԸԱՀԱՊՁԲ-16/3» ծածկագրերով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգերի վերաբերյալ և խնդրել է վերը նշված ընթացակարգերը հայտարարել ապօրինի:

8. ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը՝ ի դեմս ԳԲԽ-85/16 բողոքը քննող հանձնաժողովի, 29.08.2016թ. կայացրած որոշմամբ մերժել է «Բարվա» ՍՊԸ-ի 11.08.2016թ., 12.08.2016թ. և 16.08.2016թ. ներկայացրած բողոքները:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդը, ուսումնասիրելով «Բարվա» ՍՊԸ-ի 19.12.2016թ. ներկայացրած բողոքը, ՀՀ Շիրակի մարզի Քեթի, Մարմաշեն, Բյուրական և Վահրամաբերդ գյուղերի գյուղապետարանների գրությունները և կից փաստաթղթերը հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի համաձայն՝ օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝ գնումների և գնումների գործընթացի տնտեսող, ***արդյունավետ և օգտավետ իրականացում:***

Օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ բանակցային ընթացակարգը կարող է կազմակերպվել առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու, եթե ծագել է գնման անհետաձգելի պահանջ և, արտակարգ իրավիճակից ելնելով, գնման այլ ընթացակարգի կիրառումը ժամկետի առումով անհնար է, պայմանով, որ նման պահանջը հնարավոր չէր կանխատեսել:

«Բարվա» ՍՊԸ-ն 19.12.2016թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ «ՇՄՔՀ-ԲԸԱՀԱՊՁԲ-16/1», «ՇՄՄԳ-ԲԸԱՀԱՊՁԲ-16/1», «ՇՄԲԳ-ԲԸԱՀԱՊՁԲ-16/1» և «ՇՄՎՀ-ԲԸԱՀԱՊՁԲ-16/3» ծածկագրերով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգերը անցկացվել են ապօրինի, քանի որ բանակցային ընթացակարգով գնում կատարելու համար ընթացակարգը կարող է կազմակերպվել առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու օրենքով իմպերատիվ սահմանված կարգին, այն է՝ Կարգի 25-րդ կետի 6-րդ ենթակետի «գ» և «դ» պարբերություններով նախատեսված հիմքերով ոչ էլեկտրոնային եղանակով գնում կատարելու դեպքում ներկայացվող անձանց (հնարավոր մասնակից) թիվը **չի կարող պակաս լինել երեքից**:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 23-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերության համաձայն՝ բացառությամբ սույն կարգի 25-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանված գնումների, վառելիքի, քսայուղերի, գյուղատնտեսական նշանակության ապրանքների և ավիասպասարկման ծառայությունների, որոնց դեպքում պատվիրատուի ղեկավարի կողմից սահմանված ժամկետներում, իսկ մնացած գնումների դեպքում, եթե պատասխանատու ստորաբաժանում սահմանելու ակտով նախատեսված չէ ավելի կարճ ժամկետ, ապա գնումների պլանը հաստատվելու կամ փոփոխվելու օրվան հաջորդող վաթսուն աշխատանքային օրվա ընթացքում պատասխանատու

ստորաբաժանումը՝ կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է՝ օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված հիմքերով գնումներ կատարելու դեպքում այն անձի կամ անձանց (հնարավոր մասնակից) տվյալները (անվանումը, գտնվելու վայրը, հնարավորության դեպքում՝ էլեկտրոնային փոստի հասցեն), որոնց պետք է ուղարկվի տվյալ գնման հրավերը: Ընդ որում, սույն կարգի 25-րդ կետի 6-րդ ենթակետի «բ», «գ» և «դ» պարբերություններով նախատեսված հիմքերով գնում կատարելու դեպքում ***ներկայացվող անձանց (հնարավոր մասնակից) թվաքանակը չի կարող պակաս լինել երեքից:***

Կարգի 25-րդ կետի 6-րդ ենթակետի «գ» պարբերության համաձայն՝ գնման ընթացակարգը կազմակերպելիս՝ օրենքի 3-րդ բաժնով նախատեսված պայմաններից բացի պետք է հաշվի առնել, որ՝ գնումները կարող են կատարվել օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի հիման վրա հետևյալ դեպքերում՝. չկանխատեսված հանգամանքների հետևանքով առաջացած և հրատապ համարվող գնումների դեպքում, բացառությամբ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու կամ տվյալ գնումը կատարելու համար նոր ֆինանսական միջոցներ հատկացվելու կամ պետության կարիքների համար գնումների դեպքերի: Սույն ենթակետի համաձայն հրատապ է համարվում այն կարիքը, որը պետք է ամբողջ ծավալով բավարարվի՝ պայմանագրի կատարման արդյունքն ամբողջ ծավալով ընդունվի գնման պահանջի ծագման օրվանից հաշված մինչև տասնհինգ օրացուցային օրվա ընթացքում, պայմանով, որ հրատապ համարվող ապրանքի մատակարարումը, աշխատանքի կատարումը կամ ծառայության մատուցումը պետք է սկսվի այնպիսի ժամկետում, որի ընթացքում գնման մրցակցային որևէ ձևի կիրառումը ժամկետի առումով անհնար է:

Այսպիսով, տվյալ Ընթացակարգն ընտրելիս՝ գնումների պլանը հաստատվելու կամ փոփոխվելու օրվան հաջորդող վաթսուն աշխատանքային օրվա ընթացքում պատասխանատու ստորաբաժանումը պետք է կազմեր և հաստատեր գնման հայտը, որը ներառում է՝ օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված հիմքերով գնումներ կատարելու դեպքում այն անձի կամ անձանց (հնարավոր մասնակից) տվյալները (անվանումը, գտնվելու վայրը, հնարավորության դեպքում՝ էլեկտրոնային փոստի հասցեն), որոնց պետք է ուղարկվեր տվյալ գնման հրավերը: Քանի որ Պատվիրատուի կողմից գնումը կատարվել է, հիմք ընդունելով Կարգի 25-րդ կետի 6-րդ ենթակետի «գ»

պարբերությունը, ուստի տվյալ դեպքում ներկայացվող անձանց (հնարավոր մասնակից) թվաքանակը չի կարող պակաս լինել երեքից:

Անհրաժեշտ է նշել, որ «Բարվա» ՍՊԸ-ն 11.08.2016թ., 12.08.2016թ. և 16.08.2016թ. ներկայացրել է բողոքներ ՀՀ Շիրակի մարզի Քեթի, Մարմաշեն, Բյուրակն և Վահրամաբերդ գյուղապետարանների կողմից կազմակերպված համապատասխանաբար «ՇՄՔՀ-ԲԸԱՀԱՊՁԲ-16/1», «ՇՄՄԳ-ԲԸԱՀԱՊՁԲ-16/1», «ՇՄԲԳ-ԲԸԱՀԱՊՁԲ-16/1» և «ՇՄՎՀ-ԲԸԱՀԱՊՁԲ-16/3» ծածկագրերով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգերի վերաբերյալ և խնդրել է վերը նշված ընթացակարգերը հայտարարել ապօրինի:

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը՝ ի դեմս ԳԲԽ-85/16 բողոքը քննող հանձնաժողովի, 29.08.2016թ. կայացրած որոշմամբ մերժել է «Բարվա» ՍՊԸ-ի 11.08.2016թ., 12.08.2016թ. և 16.08.2016թ. ներկայացրած բողոքները:

Վերը նշված ընթացակարգերով «Լոկատոր» ՓԲԸ-ի հետ կնքվել են համապատասխան պայմանագրեր:

Պատվիրատուները 26.12.2016թ. և 27.12.2016թ. գրություններով նշել են, Պատվիրատուների կողմից երեք հնարավոր մասնակիցների էլեկտրոնային փոստով ուղարկվել են հրավերները, սակայն այդ ուղարկված հրավերները ***անհրաժեշտություն չլինելու պատճառով*** չեն պահպանվել: Պատվիրատուները նշել են նաև, որ միայն մեկ ընկերություն է մասնակցել ընթացակարգին, որն էլ ճանաչվել է ընթացակարգերի հաղթող: Նույն ընթացակարգերի վերաբերյալ «Բարվա» ՍՊԸ-ի կողմից նախկինում արդեն իսկ ներկայացվել էր բողոքներ՝ ապօրինի հայտարարելու հիմքով, որը Խորհրդի համապատախան որոշմամբ մերժվել էր:

Պատվիրատուները տեղեկացրել են նաև, որ պայմանագրերով նախատեսված մատակարարումը ընթացակարգերի հաղթող ընկերության կողմից պատշաճ կատարվել է և այդ պատճառով էլ. փոստով ուղարկված հրավերները պահելու անհրաժեշտությունը վերացել է:

Միևնույն ժամանակ Խորհուրդը արձանագրում է, որ «Բարվա» ՍՊԸ-ն չի ներկայացրել որևէ ապացույց բողոքով ներկայացված փաստերը հաստատելու համար:

Նման պայմաններում Խորհուրդը գտնում է, որ Պատվիրատուների կողմից ընթացակարգերով ոչ պակաս երեք հնարավոր մասնակիցներին չծանուցելը չի կարող համարվել հաստատված փաստ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

ՈՐՈՇԵՑ

«Բարվա» ՍՊԸ-ի 19.12.2016թ. ներկայացրած բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Նախագահ՝ **Հայկ Կարապետյան**

Անդամ՝ **Ռոման Մարդոյան**